

G.V. NIKOGHOSYAN

THE ETYMOLOGY OF THE ARMENIAN ROOTS ԱՂԳ, ԱՂՆ

The Armenian roots *ազգ*, *ազն*, which have several derivative forms in Armenian and parallel forms in other Indo-European languages are investigated. It has been revealed that the Armenian root *ազգ* which has parallel forms in Pehlevi and Greek languages only with the meaning «branch», is a native Armenian word. In other Indo-European languages, particularly in Romance, Germanic, Slavonic and Baltic languages, it appears as an adjective-forming suffix or as a suffix in words denoting possession to a nation, race, kind, or denoting origin.

**Keywords:** *ազգ*, *ազն*, adjective-forming suffixes, Indo-European languages, non-Indo-European languages.

ՀՏԴ 81'373.6:811.19

Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆԱԽԱՐԱՐ, ՆԱՀԱՆԳ, ՆԱՀԱՊԵՏ, ԻՇԽԱՆ, ԲԴԵՂԻՍ, ԱՇԽԱՐԿ  
ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Քննության են առնվել հայերեն *նախ-/նահ-* բաղադրիչով սկսվող մի շարք բառեր՝ նախարար, նահապետ, նահանգ, ինչպես նաև *իշխան*, *բդեղիս*, *աշխարհ* բառերը: Հայերենի և մի քանի այլ հնդեվրոպական (հ.-ե.) և ոչ հ.-ե. լեզուներում այս բառերի համեմատությունը ցույց է տալիս, որ *նախ-/նահ-* բաղադրիչի հնագույն իմաստն է *նայել*, *դիպել*, *տեսնել*: Միևնույն օրինաչափությամբ, հայերեն *իշխան*, *բդեղիս*, *աշխարհ* բառերի իրական արմատը ձևափոխությունների ենթարկված *աչք* բառն է:

**Առանցքային բառեր.** նախարար, նահապետ, նահանգ, իշխան, բդեղիս, աշխարհ, հնդեվրոպական լեզուներ, ոչ հնդեվրոպական լեզուներ:

Հայերենում, ինչպես ցանկացած այլ լեզվում, գոյություն ունեն բազմաթիվ բառեր, որոնք լեզվի արդի փուլում բաղադրիչների չեն բաժանվում, սակայն պատմականորեն պարզ բառեր չեն եղել: Այդ բառերի բաղադրիչները կազմող որոշ արմատներ, ածանցներ, մասնիկներ, նախնական իմաստից զրկված լինելով, այսօր անվերծանելի են: Ակներև է, որ, օրինակ, հայերեն *աշխանակ*, *աշխարակ*, *աստիճան*, *գերանդի*, *խոնարհ*, *հանդերձ*, *անտառ*, *հանգրուան*, *մակարդ*, *նպատակ*, *պատասխան*, *պարիսպ* և այլն, պարզ բառեր չեն: Այսօր բազմաթիվ նման բառեր պարզ են համարվում մեկ պատճառով՝ բարդությունը կազմող բաղադրիչներն այլևս անգործածական են, իսկ որոշ դեպքերում իմաստը լիովին մթազնած է: Որոշ դեպքերում արմատն առանձին կիրառելի է հայերենում, սակայն բարդությունն աղավաղված է և, հետևաբար, դարձյալ անվերծանելի: Որոշ, հատկապես

իրանական համարվող բառերի ստուգաբանությունը շատ դեպքերում ևս խնդրի լուծում չի առաջադրում, քանի որ բառի առանձին բաղադրիչների իմաստը իրանականում ևս կորած է: Պահլավերեն զուգահեռները պարզապես ենթադրվում են, որոշ բացատրություններ լիովին համոզիչ չեն:

Փորձենք քննության առնել հայերենի իրանական փոխառություններից մի քանիսը: Այսպես, հայերեն *նախարար*, *նահանգ*, *նահանջ*, *նահապետ*, *նահապակ* բառերում առանձնանում են *նախ-* և *նահ-* բաղադրիչները: Ակնհայտ է, որ սրանք տարաժամանակյա վերլուծության տեսակետից պարզ բառեր չեն: Հայերենն ունի *-արար*, *-անգ*, *-անջ*, *-պետ*, *-ապակ* բաղադրիչներով բազմաթիվ այլ բառեր (*խոհարար*, *խոովարար*, *շինարար*, *երանգ*, *հրահանգ*, *պահանգ*, *ականջ*, *պահանջ*, *ղողանջ*, *հայրապետ*, *զորապետ*, *նավապետ*, *գնդապետ*, *ամբարտապակ*, *գումարտակ*, *խորտակ*, *հովապակ*, *շահապակ*, *նպատակ* և այլն): *Նախարար*, *նահանգ*, *նահանջ*, *նահապետ* բառերի իրանական ձևերը ավանդված չեն, և հայերեն բառերը բխեցվում են ինչ-որ ենթադրյալ ձևերից: *Նահանգը* համարվում է ասորական փոխառություն, իսկ *նախ* և *նահապակ* բառերը ստուգաբանված չեն [1, 420-423]:

Ըստ Հ. Աճառյանի՝ *նահանջ* բառը ծագում է պահլավերեն \*n-ahanj «քաշել, ետ քաշել» բառից n- մասնիկով ahanjitan «քաշել, ետ քաշել» բայից: Նա նույնն է համարում պարսկերեն āhanjidan «քաշել» արմատը:

Հնարավոր է, սակայն, որ *նախարար*, *նահանգ*, *նահանջ*, *նահապետ*, *նահապակ* բառերում առաջին բաղադրիչը (*նախ-*, *նահ-*) ընդհանուր իմաստ ունենա:

Սանսկրիտում *देश* [deṣa] բառը նշանակում է «տեղ, վայր, երկիր, շրջան, գյուղ, պետություն, քաղաք» [2]: *दिश्* [diṣ] բառի իմաստներն են «1. վկայել, ղեկավարել, 2. ցուցադրություն, ուղղություն, տեսք, 3. երկիր, եզերք, նահանգ, շրջան», նաև՝ «ղեկավարել, ուղղորդել, հրամայել»: *देशक* [deṣaka] նշանակում է «սովորեցնող, ցույց տվող, ուսուցիչ», *देशन* [deṣana] «ուսմունք»: Տվյալ արմատի ավելի հին ձևն է *दर्श* [darṣ] «տեսնել, նայել, դիտել», և *दर्* [dar] «նայող, հայացք, աչք», որտեղից վերոբերյալ օրինակներում սղված է r ձայնորդը: Այս արմատից են *दर्शन* [darṣana] «տեսնող, նայող, դիտող, տեսողություն, զննում, հայտնվելը, ուսմունք, արտաքին տեսք», *दर्शय* [darṣya] «երևելի, տեսանելի», և այլն: Կա նաև *प्रदर्श* [pradarṣa] «հայացք, խրատ, ցուցում», *प्रदर्शन* [pradarṣana] «արտաքին տեսք, ցուցադրություն, ուսուցում», և այլն [2]: Հնդկերենում *देश*[deṣ] նշանակում է «երկիր, պետություն, հայրենիք, շրջան, տարածք», իսկ *प्रदेश*[pradeṣ] բառի իմաստն է՝ «նահանգ, տարածք, ոլորտ»: Այս արմատից են *प्रदेशनी*[pradeṣnī] «ցուցամատ»,

և પ્રદેશિત[pradeṣit] «ցույց տրված, բացատրված», પ્રદર્શન [pradarṣan] «ցույց, ցուցադրություն, ցուցահանդես», दर्शक [darṣak] «հանդիսատես, դիտող», दरसाना [darsā-nā] «երևալ, հայտնվել», որոնք բոլորն էլ փոխառություններ են սանսկրիտից [3]:

Ժամանակակից հնդկերենում պահպանված են՝ देख [dekʰ] «դիտելը, դիտում, նայելը», देखना [dekʰna] «նայել, տեսնել, դիտել, զննել», दीखना [dīkʰnā] «երևալ, հայտնվել», दिखाना [dikʰānā] «ցույց տալ, հայտնաբերել» (देखना [dekʰnā] բայի պատճառական կերպ): Սա արմատի այլ տարբերակ է, որում դեռևս քմայնացում չկա:

Կան նաև दीठ [dītʰ] «տեսողություն, հայացք, աչք» (հմմտ. հայ. *դէպ/դիպել*) և սանսկրիտից փոխառյալ दृष्टि [dṛiṣṭi] «տեսողություն, հայացք, տեսակետ» ձևերը: Վերջինը ծագում է սանսկրիտ दर्श [darṣ] «տեսնել, նայել, դիտել» արմատից, մինևսնյն բայի կատարյալ կերպն է և բառացի նշանակում է «տեսած»: Նշված արմատների հայերեն զուգահեռը *տես* արմատն է, որում ևս առկա է *ր* ձայնորդի անկում, այլ հ.-ե. լեզուներում՝ հուն. δέρομαι «նայել», հ.իռլ. derc «աչք», և այլն\*:

Այսպիսով, նկատում ենք, որ կա որոշակի կապ *երկիր*, *տարածք*, *նահանգ* և *տեսնել*, *նայել*, *դիպել*, *հայացք*, *աչք* իմաստային խմբերի միջև: Պետք է ենթադրել, որ վաղնջական ժամանակներում մարդու համար երկիրը, տարածքը, նահանգը, քաղաքը այն է, ինչ մարդը տեսնում է, ինչին մարդը նայում է: Փորձենք պարզել՝ արդյո՞ք *նահանգ* բառը կապ ունի հայերեն *նայել* արմատի հետ:

Այս արմատը զուգահեռ ձևեր չունի հ.-ե. լեզուներում: Բացառություն է թերևս սանսկրիտը, որտեղ հանդիպում է नयन [nayana] «աչք» ձևը, նաև՝ नय [naya] «վարք, ուսմունք», որից կազմված բարդություններ կան՝ नयनवारी [nayana-vāri] «արցունքներ», नयनजल [nayana-jala] «արցունքներ» (բառացի՝ աչքի ջուր), नयवन्त [nayavant] «իմաստուն» [2]:

Նկատի առնելով այն իրողությունը, որ հայերենի բազմաթիվ արմատներ, զուգահեռներ չունենալով հ.-ե. լեզուներում, ունեն այդպիսիք այլ լեզվաընտանիքների պատկանող լեզուներում, փորձենք գտնել այդ զուգահեռները, դիցուք, ուրալյան լեզվաընտանիքի ֆիննաուգրական ճյուղի լեզուներում: Այսպես, հայերեն *նայել* արմատի դիմաց գտնում ենք՝ ֆիններեն nähdä «տեսնել», näkemiin «ցտեսություն», näkeminen «տեսնելը, տեսողություն», näkö «տեսողություն», näkyä «երևալ»,

\* Հայերենի ր ձայնորդի անկումը կարելի է դիտարկել հետևյալ արմատային կրկնակներում՝ *խաշել/աղեխարշ*, *քաշ/քարշ*, *մաշել/մարսել*/\**մարշել*, *հոսել*/\**հորսել/հորդ*, *տաշել*/\**տարշել* (զուգահեռը կա հինդիում):

näytellä «ցույց տալ, պատկերել» [4], էստոներեն nägema, näha «տեսնել», näha olema «երևալ», nägemine «տեսողություն», nägu, näo «դեմք, կերպարանք», näi/de, -te «օրինակ», näikse «թվում է, երևում է», näiv, näilik «թվացող», näitama, näidata «ցույց տալ», näitamine «ցուցադրում», näitus «ցուցահանդես» [5], հունգարերեն nézni «նայել», nézet «հայացք, կարծիք» [6], կոմի-պերմ. нэджжавны «զննել, դիտել», нэджжалём «զննում, դիտում» [7], ուլմուրտ. наяны «համը տեսնել» [8], էրզյաներեն неемс «տեսնել», неявомс «երևալ, թվալ» [9], մոկշաներեն няеви «երևում է», няемс «տեսնել, նկատել», няевомс «երևալ», няи «ականատես», няфтемс «ցույց տալ», няевикс «ակնհայտ», афняевикс «աննկատելի», няк «մասն. տեսնում ես» [10], որոնք բոլորը միևնույն արմատից են:

Վրացերենում ნახვა [նախվա] «տեսնել», ნახული [նախուլի] «տեսած», ნახულობს [նախուլոբս] «տեսնում է», სანახაობს [սանախաոբս] «տեսարան, ներկայացում», ღანახვება [ղანախվება] «ցույց տալ», ხ.վրաց. სანახები [սանախებე] «տեսք, տեսարան, շրջակայք»: Հայերենից փոխառյալ ნახვეტი [նախպետի] «զավառապետ» բառի մեջ [11], ամենայն հավանականությամբ, պահպանվել է առավել հին նախ- բաղադրիչը:

Արաբերենում nāzir նշանակում է «աչք, հայացք», նաև՝ «դիտող, ղեկավար, տնօրեն, կառավարիչ», nažara «տեսնել, նայել, նկատել, դիտել, քննել, հետաքննել, հոգ տանել», nažar «տեսողություն, հայացք, հեռանկար, զննություն, քննություն, ուսումնասիրություն», nažari «տեսողական», nižāra «հսկում, ղեկավարում», nažarat «տեսարան», nāhiya «կողմ, ուղղություն, շրջան, տարածք, դաշտ»:

Միևնույն արմատից են տաջիկերեն назар «հայացք», назаргоҳ «դիտակետ», назария «տեսություն», назорат «վերահսկողություն», назорат кардан «հսկել», наздик «մոտիկ», нигаристан «նայել»:

Այսպիսով, աչք և տեսնել, նայել հասկացությունները կապվում են նաև հսկել, կառավարել, տեսարան, տարածք հասկացությունների հետ:

Հնդկերենում नज़र [nazar] նշանակում է «տեսողություն, հայացք»: Փոխառություն է արաբերենից:

Աշխարհի բազմաթիվ լեզուներում գոյություն ունի հեղինակելի պայթական/շփական/կոկորդային շունչ հերթագայությունը, նույնիսկ մեկ բառի հարացուցային ձևերում: Ապացուցված է, որ պայթականը թուլանալով՝ վերածվում է շփականի, այնուհետև՝ կոկորդային շնչի: Ֆիններենում գոյականի, թվականի թեք հոլովներում պայթականը թուլանում է կամ սղվում՝ väki/väen «ժողովուրդ», järki/järjen «խելք», kaksi/kahden/kahta (ուղղ./սեռ./partit.) «երկու»: Բայական

ձևերում գտնում ենք՝ *nähdä* «տեսնել», - *näkee* «տեսնում է», *tehdä* «անել», - *tekee* «անում է»: Ֆիններենում *nähdä* «տեսնել» բայի սահմ. եղ. ներկա ժամանակի ձևերն են՝ *näen, näet, näkee, näemme, näette, näkeva*: Էստոներենում ևս հանդիպում է պայթականի անկում կամ լիակատար քմայնացում մինչև քմային ծայնորդ՝ *jõgi/jõe* «գետ», *jälg/ jälje* «հետք», *külg/ külje* «կողք, կողմ» [12, էջ 28, 44]: Էստոներենում *nägema* «տեսնել» բայի հարացուցային ձևերն են՝ *näen, näed, näeb, näeme, näete, näevad* (ներկա ժ.), *nägin, nägid, nägi, nägime, nägite, nägid* (անցյալ ժ.), *näe, nähke* (իրամ. եղ.): Հարացուցային ձևերը հետագայում կարող էին դառնալ առանձին արմատներ:

Այսպիսով, *nak-, nah-, nae* (նաև *naz-, nez-*) արմատի նախնական նշանակությունն է «նայել, տեսնել»: Հայերենում *նախ, նախարար* բառերում, հավանաբար, *նայ-ել* արմատի առավել հին ձևերն են: Ըստ երևույթին, այս արմատից է նաև *նկատել* բառը: Հ. Աճառյանը այն չի ստուգաբանել, սակայն նշել է պարսկերեն *nigāh* «նայվածք» բառը:

*Նախ* արմատը, ըստ Հ. Աճառյանի ՀԱԲ-ի, ստուգաբանված չէ: Ենթադրվում է, որ, հայերենից բացի, ոչ մի լեզվում չկա: Հ. Աճառյանը նշում է, որ պահլավերեն *naxust* «սկիզբ, առաջին» ձևը կազմված է –ուստ ածանցով: Սա հայերեն *ուստի* մակբայն է, և բացառականի –*ուստ* կազմիչը: Միանշանակորեն, բառը չի կարող իրանական համարվել, և ծագումն անհայտ է:

Սակայն և՛ ձևով, և՛ իմաստային առումով այն կապվում է գերմաներեն *nach* «հետո, դեպի, ըստ, անց, նման» նախդրի և *nah(e)* «մոտ» ածականի հետ (նաև *sich nahen* «մոտենալ»): Գերմանական խմբի լեզուներում այս արմատի այլ զուգահեռներն են. գոթ. *nehw* «մոտ», հ.բ.գ. *nāh* «after, near to, beside», հոլանդ. *na*, անգլ. *nigh*, միջին անգլ. *neh, neih, ney*, հ. անգլ. *nēah* «մոտ», հ.սաքսոն. *nāh* «մոտ»: Ստուգաբանական բառարաններում այս արմատը համարվում է անհայտ ծագման բառ [13, 14, 15]: Պետք է ենթադրել, որ արմատի նախնական *նայել, աչք* իմաստներից ծագել են *առաջ, հետ, հետո, մոտ* իմաստները:

Հայերեն *նախարար* բառացիորեն նշանակում է «նայող», այսինքն՝ «երկիրը, տարածքը հսկող, պահպանող» (հիշենք այսօր էլ հայերենում գոյություն ունեցող որոշակի ենթամշակույթի պատկանող «նայող» բառը): Ուստի, *նահապետ* բառի իմաստն է «գլխավոր հսկող կամ հսկողների պետ»: Արժե հիշատակել հայերեն *տեսուչ* բառը, որն իրապես «հսկող» է նշանակում: Ասել է, թե՛ նայելն ու հսկելը միևնույն բանն է\*: Հսկել բառը, հավանաբար, աղավաղված

\* Իմաստափոխությունը ցույց տալու համար, թերևս, արժե համեմատել նաև իտալերեն *guardare* «նայել, պահպանել», *guardia* «պահակ, պահակախումբ, ժամապահ, պահպանություն, *նազմ*. գվարդիա», *guardaspalle* «թիկնապահ» բառերի հետ:

աչքն է (հմմտ. բրբռ. *իշկել, այսինքն՝ աչքել*)\*\*: Այսինքն՝ *հսկիչ* ևս բառացի «նա-յող է նշանակում»\*\*\*:

Այսպիսով, նահանգը այն է, ինչ մարդու աչքը տեսնում է: Իմաստային ան-ցումն է՝ *տես > տեսարան > տեսադաշտ > տարածք > երկիր, շրջան, նահանգ* և այլն: Արմատն է, հավանաբար, հայերեն *նախ*-ը «առաջ, առաջին, գլխավոր, հին»: Այն, ինչ տեսնում ենք, առաջինն է, կամ առաջինը կամ հինը սկզբից ենք տեսել կամ տեսնում:

Եթե ընդունենք, որ *նախ/նահ/նկ-ադ-ել* միևնույն արմատի տարբերակ-ներն են, ապա այս բաղադրիչներով կազմված բոլոր բառերը բնիկ հայերեն են: *Նահադակ* «առաջամարտիկ» բառում *նահ*- արմատը նախ «առաջ» բառի մեկ այլ տարբերակն է Այնուամենայնիվ, *նպատակ, շահատակ, ասպատակ, խորտակ, վաստակ* և այլ նման բառերում վերջին բաղադրիչը մնում է անհասկանալի:

Ինչ վերաբերում է *նախարար* և *նահապետ* բառերի իրանական ծագմանը, ապա հնարավոր է, որ իրանական \*nāfādāra և պարթևական \*nāfapati ձևերը ուղղակի հորինվածք են: Հասկանալի չէ, թե *f* հնչյունը ինչու՞ պետք է մի դեպքում *h*-ի և մյուս դեպքում *խ*-ի վերածվեր: Տիպաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ *h*-ն *խ*-ի թուլացման հետևանք է: *Նահանջ* բառի մեջ –անջ-ը ակնհայտորեն առանձին մասնիկ է (*ականջ, դողանջ, հորանջ, պահանջ*): Այնուամենայնիվ, *նահ*- բաղադրիչը մնում է անհասկանալի:

*Իշխել, իշխան*: Այս երկու արմատները Հ. Աճառյանը համարել է իրանա-կան փոխառություն: *Իշխան* բառը համարվում է փոխառյալ իրանական xšānā-ձևից, իսկ *իշխել* բառը՝ դարձյալ իրանական ձևից՝ xši- «իշխել, տիրել»: Սակայն պահլավերենում և պարսկերենում այս ձևերը չկան: Աճառյանը օրինակներ է բե-րում այլ իրանական լեզուներից՝ սոգդիերեն և գենդերեն: Պահլավերենում և պարսկերենում կա միայն šāh «թագավոր» ձևը, որն ակնհայտորեն աղավաղված բառ է: Այս արմատների իրանական ծագման վարկածը հազիվ թե համոզիչ է:

Վերը հիշատակվեց բարբառային *իշկել* ձևը, որն իրականում *աչք* բառի ձևափոխությունից է առաջացել: *Աչք* բառը հայերենի որոշ բարբառներում ունի նաև *աշկ/աշք/աշգ* ձևերը (Երևան, Գորիս, Ղրբ., Մրդ. *աշկ*, Ռ., Սլմ. *աշք*, Ակն, Խրբ., Պոլիս, Սեբ. *աշգ*): Նշվեց նաև, որ պայթականները թուլանալով՝ վերած-վում են ըստ արտասանության տեղի նույնական շփականների, այնուհետև կո-կորդային շնչի[12, էջ 24-25]: Կարող են բոլորովին անհետանալ, կարող են վերածվել քմային ձայնորդի: Այդպիսի բազմաթիվ օրինակներից նշենք մի

\*\* Հմմտ. հնդ. देश[deṣ], प्रदेश[pradeṣ] և հայերեն *դշխոյ* «թագուհի», որը չստուգաբանված բառ է:

\*\*\* Հ. Աճառյանը *հսկել*-ը կապում է *սկել* արմատի հետ՝ «արթուն մնալ և ուշադիր լինել»: Սակայն բառի իմաստն իսկ հուշում է, որ բուն նշանակությունն է «աչք»:

երկուսը հայերենի բարբառներում. Ղրբ. Արաքս – սեռ.հ. Ռա'խսան, կանգնել – կաղնել:

Գ/բ/կ > դ/խ հնչյունափոխության օրինակներ են՝ իսլանդ. dagur [dɑqyʀ] «օր», dagsljós [dɑxsljous] «ցերեկվա լույս», huga [hyqa] «հոգալ», hugur [hy:qyʀ] «1. խելք 2. միտք 3. ոգի, հոգի, սիրտ 4. քաջություն», hugga [hyq:a] «մխիթարել», hugsa [hyxsa] «մտածել», saga [sa:qa] «պատմություն, պատմվածք», sagt [saxth] «ասաց» [16], ռուս. бог, мягкий, легкий, ռուս. кто, ուկր. хто:

Քմայնացման օրինակներ. կանգնել – Սլմ., Ալշ. Վան կայնել, Ոգմ. Խրբ., Պլ., Սեբ., Տիգ. կայնիլ, անկանել/ընկնել – Խրբ., Կրն., ըյնիլ, Սեբ., Վան, Մրդ. իյնել, Պլ. իյնալ, աքլոր – Վան, Մրդ. այիլէօր, եղունգն – Ղրբ. դենգ', դեյնը, ծունկ – Ղրբ. ծոյնը, ճրագ – Վան ճրահ', ճկվել > Մրդ. ճիյվել, երեկ > Մրդ. յերեկ', յերեյ, քակվել > Մրդ. Քայվել, օգնել > Սլմ. էօյնել, թեքվել > Սլմ. թիհվել [12, էջ 38-39], արեգակ – Ղրբ. ըրի'քյնակ, ըրի'յինակ:

Արդյոք կապ կա՞ իշկել և իշխել ձևերի միջև: Հավանաբար, այո, և երկուսն էլ նշանակում են «նայել, հսկել»: Իշխան բառացի նշանակում է «նայող, հսկող»: Հայերենում *-ան* վերջավորությամբ բառերի մեծ մասը հնագույն ձևեր են, այնքան հին, որ որոշ բառերում արմատի նախնական իմաստը մթազնած է, որոշ ամատներ միայն դժվարությամբ կարելի է ստուգաբանել: Այս վերջավորությունն ունի ենթակայական կամ հարակատար դերբայի իմաստ և նշանակում է «ինչ-որ բան անող կամ արած»\*: Օրինակ *հաչան/կծան շուն* նշանակում է «հաչացող/կծող շուն», *սուտասան*՝ «սուտ ասող»: Պարան բառացի նշանակում է «ոլորվող կամ ոլորված»: Միննույն իմաստն է *ոլորան* բառում: *Խարան* նշանակում է այրած, *շարան*՝ շարած, *պարան*՝ պատած, փաթաթած, *դերձան*՝ ոլորված, *մերան*՝ մերող, *գութան*՝ կտրող, *գերան*՝ կտրած (ծառի կտրած մասը): Ինչպես տեսնում ենք, որոշ բառերում արմատի նախնական իմաստը մթազնած է, իսկ դրանց ստուգաբանությունը լուրջ համեմատական քննություն է պահանջում: Այս կազմիչը գոյություն ունի բազմաթիվ հ.-ե. և ոչ հ.-ե. լեզուներում, սակայն նախնական իմաստը՝ *անել*, բացի հայերենից, ոչ մի լեզվում պահպանված չէ: *-ան* կազմիչով բաղադրված բոլոր բառերը, ներառյալ իրանական և կովկասյան փոխառություն համարվողները, բնիկ հայերեն են [17, էջ 156-163]:

Հետևաբար, *իշխան* նշանակում է «իշխող»\*\*:

\* Այս դերբայները որոշ լեզուներում ուղղակի ներկա և անցյալ ժամանակի դերբայներ են, որոնք, մեր համոզմամբ, հնում չեն տարբերվել:

\*\* Այս և վերը նշված բազմաթիվ դեպքերում գործ ունենք տիպաբանական այն երևույթի հետ, երբ դերբայները վերածվում են նախ ածականի, այնուհետև գոյականի իմաստ են ստանում:

Ուշագրավ է *բղեշխ* բառը: Ըստ Հ. Աճառյանի՝ *բղեշխ* կամ *բղեաշխ* «մեծ իշխան, կուսակալ» բառն ունի իրանական ծագում: Բառի տարբեր տառադարձություններն են՝ ասոր. *paṭaxšā*, հուն. *πητιάξης*, *βιτάξης*, վրաց. *პატიახში* [պիտիախշի], *პატიახში* [պատիախշի], *პატიაში* [պատիաշխի]: Իրանական \**patiaxša-* / \**paitiaxša-* ձևերը ենթադրյալ են, այսինքն՝ իրականում գոյություն չունեն, կազմված են *paiti-*/պատ- նախամասնիկով: Պահլավերենում կա նաև «տեղակալ, փոխարքա» բառը, որը հուն. *βιτάξης* ձևի հետ միասին առավել մոտ է հայերենի *բղեշխ* բառին: Թերևս, ընդունելի է, որ բառը բաղկացած է *պար* – և *աշխ/աշք/աչք* արմատներից (հմմտ. բրբռ.՝ *աշել*), այսինքն՝ *բղեշխ/բղեաշխ* նշանակում է «պատը հսկող»: Սակայն ինչու՞ պետք է մեծ իշխանը, կուսակալը լինեն «պատը հսկող»: Հիշենք, որ հնում բղեշխները պահպանում էին Հայաստանի հյուսիսային, արևելյան, հարավային և արևմտյան սահմանները, այսինքն՝ Հայաստանի չորս պատերը: Ուստի, պետք է ենթադրել, որ *բղեշխ/բղեաշխ* բառի մեջ *բղ-* նախամասնիկը հայերեն *պար* բառն է: Տվյալ դեպքում տեղի է ունեցել արմատի պայթականների ձայնեղացում:

*Աշխարհ*: Եվս մի բառ, որը, կարծես, կազմված է *աշխ/աշք/աչք* արմատից: Աշխարհը այն է, ինչ տեսնում ենք, այն է, ինչին աչք ենք նետում՝ աչք + արկանել (ունենք նաև բրբռ. *աշել*)\*: Հ.պրս. *xšātra* «թագավորություն», պրս. *šahr* «քաղաք», պիլ. *xšatr* «երկիր», քրդ. *šar* «երկիր», *šehir*, *šehir* «քաղաք» ձևերը պետք է որ հայերեն *աշխարհ* բառի աղավաղումները լինեն, թեև առաջին հայացքից կարող է թվալ անհավանական: Աղավաղում է նաև իրանական *xšay* «իշխել» արմատը, քանի որ իշխելը ևս ածանցված և ոչ նախնական իմաստ է: Զուգահեռ ձևերից է նաև սանս. *क्षेत्र* [kṣétra] «տերություն, իշխանություն», նաև՝ «հող, հողակտոր, դաշտ երկիր, քաղաք»:

Այսպիսով, հայերեն *նախարար*, *նահապետ* բառերում *նախ-/նահ-* բաղադրիչը ունի *նայել*, *հսկել* իմաստը, որը վկայված է բազմաթիվ լեզուներում: Այդ է ապացուցում նաև այն, որ հնդկերեն *दृष्टि*[deç] «երկիր, պետություն, հայրենիք, շրջան, տարածք», *प्रदेष्टि*[pradeç] «նահանգ, տարածք, ոլորտ» բառերը ծագում են *दृष्टि* [darç] «տեսնել, նայել, դիտել», *देखना* [dek<sup>h</sup>na] «նայել, տեսնել, դիտել, զննել» արմատներից (հուն. *δέσχομαι* «նայել», հ.իռլ. *derc* «աչք»): *Նայել* իմաստից են

\* *-արհ* մասնիկով է կազմված նաև խոնարհ բառը, որ նշանակում է դեպի ներքև, ցած թեքված: Հնարավոր է, նախնական *արկ* արմատը որոշ դեպքերում ձևափոխվել է, բառավերջին պայթականի թուլացումով, *-արխ* միջանկյալ տարբերակի միջով անցնելով, դարձել է *-արհ*: Հմմտ. *խաթունարխ*:

ծագում նաև հայերեն *նահանգ*, *նախ* բառերը: Առավել բարդ է *նահանջ* և *նահարակ* բառերի ստուգաբանությունը:

Հայերեն *աշխարհ*, *իշխել*, *իշխան*, *բղեշխ* բառերում առկա են *աչք* արմատի փոփոխված ձևերը: Վերոբերյալ բոլոր արմատների ստուգաբանությունը կապված է *նայել*, *դիտել*, *տեսնել* իմաստների հետ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Եր., Երևանի հ-լասարանի հրատ., 1971-1979.
2. **Кочергина В.А.** Санскритско-русский словарь, [संस्कृत-रूषी शब्दकोश:]- М.: Изд. “Русский язык”, 1987.- 973с. (30000).
3. Хинди-русский словарь [हिन्दी-रूसी शब्दकोश]- М., Изд-ль Степаненко, 1972.- Т.1.- 812с. (अ-च); Т.2.-824с. (प-ह).
4. Финско-русский словарь (Suomalais – venäläinen sanakirja).- М.: Изд. “Русский язык”, 1975.- 815с. (82000).
5. Эстонско-русский словарь.- Таллин, 1997.- Т. 1, А-Ж.- 981с.
6. Венгерско-русский словарь.- М.-Буд.: “Русский язык”, Изд. Акад. наук Венгрии, 1987.- 871с., (40000).
7. Коми-пермяцко-русский словарь.- М.: Изд-во “Русский язык”, 1985.- 622с. (27000).
8. Удмуртско-русский словарь.- М.: Гос. изд. иностр. и нац. сл., 1948.- 448с. (15000).
9. **Коляденков М.Н., Цыганов Н.Ф.** Эрзянско-русский словарь.-М.: Гос. изд. иностр. и нац. словарей, 949, 292с. (15000).
10. **Потапкин С.Г., Имеряков А.К.** Мокшанско-русский словарь, М., Гос. изд. иностр. и нац. сл., 1949.- 360с. (17000).
11. **Գորգաձե Ռ.**, Վրացերեն-հայերեն բառարան, Երևանի համալսարանի հրատ., 2005, 715 չգ:
12. **Նիկողոսյան Գ.**, Հայ-ֆիննաուգրական լեզվական առնչություններ, Ատենախոսություն, Երևան, 2011, էջ 70-77:
13. Etymological Dictionary of the German Language, by Friedrich Kluge.- London, 1891, 2013.
14. A Handbook of Germanic Etymology, by Vladimir Orel.- Leiden, 2003.
15. A Concise Etymological Dictionary of the English Language, by Walter Keat.- Great Britain, Oxford University Press, 1882, 2013.
16. **Берков В.П.**, Исландско-русский словарь.- М.: ГИС, 1962.- 1063с. (35000).
17. **Նիկողոսյան Գ.**, Հայերենի կովկասյան փոխառությունների հարցի շուրջ, Բանբեր Երևանի Համալսարանի, 2008, № 3, էջ 156-163:

Г.В. НИКОГОСЯН

ЭТИМОЛОГИЯ АРМЯНСКИХ СЛОВ ՆԱԽԱՐԱՐ, ՆԱՀԱՆԳ, ՆԱՀԱՊԵՏ,  
ԻՇԽԱՆ, ԲԴԵՇԽ, ԱՇԽԱՐՀ

Проведен анализ ряда армянских слов с начальным компонентом նախ-/նահ- (նախարար, նահապետ, նահանգ), а также слов իշխան, բդեշխ, աշխարհ. Сравнение этих слов с некоторыми индоевропейскими и неиндоевропейскими языками показывает, что древнейшее значение компонента նախ-/նահ- «смотреть, видеть». Следуя этой закономерности, можно предположить, что настоящим корнем в армянских словах իշխան, բդեշխ, աշխարհ является видоизмененный корень աչք.

**Ключевые слова:** этимология слов, նախարար, նահապետ, նահանգ, իշխան, բդեշխ, աշխարհ, индоевропейские и неиндоевропейские языки.

G.V. NIKOGHOSYAN

ETYMOLOGY OF THE ARMENIAN WORDS  
ՆԱԽԱՐԱՐ, ՆԱՀԱՆԳ, ՆԱՀԱՊԵՏ, ԻՇԽԱՆ, ԲԴԵՇԽ, ԱՇԽԱՐՀ

Several Armenian words with the component նախ-/նահ- (նախարար, նահապետ, նահանգ), as well as the words իշխան, բդեշխ, աշխարհ have been studied. The comparison of some Indo-European and non-Indo-European languages shows that the oldest meaning of the component նախ-/նահ- is «to look, to see». Following this assumption, we may conclude that the real meaning of the root in the words իշխան, բդեշխ, աշխարհ is the Armenian word աչք «eye».

**Keywords:** նախարար, նահապետ, նահանգ, իշխան, բդեշխ, աշխարհ, Indo-European languages, non-Indo-European languages.

ՀՏԴ 81'373.43:821.19

Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Գ. ՄԱՀԱՐՈՒ  
«ԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՎԻՊԱՇԱՐՈՒՄ

Ներկայացվում են Գ. Մահարու «Եռագրություն» վիպաշարում առկա դարձվածքային նորակազմությունների առանձնահատկությունները, լուսաբանվում այդ կառույցների համագործածական բառապաշար կամ գրական լեզու մուտք գործելու միտումները:

**Առանցքային բառեր.** դարձվածք, նորաբանություն, խոսակցական լեզու, գրքային ոճ, դարձվածքային տարբերակներ:

Դարձվածքային նորակազմությունները, ի տարբերություն բառայինների, ձևավորվելով խոսակցական և գրական բառաշերտերում, հեշտությամբ կարող են վերածվել համագործածական լեզվական միավորների և, մուտք գործելով